

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Բազալտե եզրաքարեր
Տեխնիկական պայմաններ



ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱՂԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆ 2019

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման ազգային համակարգի հիմնական սկզբունքները և աշխատանքների կատարման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով:

Տեղեկություններ ստանդարտի մասին

1 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից

2 ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի _____ կողմից:

3 ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի տնօրենի հրամանով

ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանում, N

6 ԳՈՐԾԱՐԿՎՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

Սույն ստանդարտի ուղղումների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների տեքստերը հրատարակվում են «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատվի մեջ: Սույն ստանդարտի վերանայման կամ չեղյալ հայտարարման դեպքում համապատասխան տեղեկատվությունը կհրատարակվի նշված տեղեկատվի մեջ: Ուղղումների, փոփոխությունների, վերանայման կամ չեղյալ հայտարարման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների նախագծերի տեքստերը տեղադրվում են նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի ինտերնետային կայքում (www.sarm.am):

Սույն ստանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն առանց ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի թույլտվության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Բազալտե եզրաքարեր Տեխնիկական պայմաններ

БОРДЮРЫ ИЗ БАЗАЛЬТА
Технические условия

Curbs from basalt
Specifications

Գործարկման թվականը՝

1 Կիրառման ոլորտը

Սույն ստանդարտը տարածվում է ՀՀ տարածքի բազալտի հանքավայրերից արդյունահանված բազալտից պատրաստված եզրաքարերի (այսուհետ՝ եզրաքար) վրա:

Եզրաքարերը նախատեսված են ճանապարհի երթևեկելի մասերը (մայրուղիները, հիմնական փողոցները), խոտածածկ տարածքները, հասարակական տրանսպորտի համար նախատեսված կանգառները, կամուրջները, թունելները և այլն՝ հետիոտնի համար նախատեսված մայթերից և ճեմուղիներից առանձնացնելու (սահմանազատելու) համար:

Սույն ստանդարտը սահմանում է բազալտե եզրաքարերի հիմնական չափերը, ձևերը, մակատեսքի բնութագրերը, ֆիզիկամեխանիկական ցուցանիշները, ինչպես նաև ընդունման կանոնները, փորձարկման մեթոդները, փոխադրման և պահման պայմանները:

2 Նորմատիվ վկայակոչումները

Սույն ստանդարտում վկայակոչված են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը.

ՀԱՏ ԵՆ 1343-2015 Արտաքին սալարկման համար բնական քարից եզրաքարեր.

Պահանջներ և փորձարկման մեթոդներ

ԳՕՍՏ 166-89 Ձողակարկիներ. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍՏ 427-75 Մետաղական չափողական քանոններ. Տեխնիկական պայմաններ

ՀՍ 405-2019

ԳՕՍ 3749-77 Ստուգիչ անկյունաքանոններ 90°. Տեխնիկական պայմաններ
ԳՕՍ 30108-94 Նյութեր և շինվածքներ շինարարական. Բնական ռադիոնուկլիդների տեսակարար արդյունավետ ակտիվության որոշումը
ԳՕՍ 30629-2011 Նյութեր և շինվածքներ երեսպատման լեռնային ապարներից. Փորձարկման մեթոդներ
ԳՕՍ 32018-2012 Բնական քարից ճանապարհաշինական արտադրանուսակներ. Տեխնիկական պայմաններ

3 Տերմինները և սահմանումները

Սույն ստանդարտում կիրառվում են տերմիններն ըստ ՀՍ 119-ի, ինչպես նաև հետևյալ տերմինները՝ համապատասխան սահմանումներով.

Բազալտ՝ Բազալտ՝ գորշ կամ սև գույնի, հրաբխային կամ մագմատիկ էֆուզիվ ապարների տարատեսակ է, որն առանձնանում է ջերմաստիճանի, մեխանիկական և քիմիական նյութերի ազդեցությունների նկատմամբ կայունությամբ և մշակելիությամբ, համարվում է կարծր քարանյութ:

Եզրաքար՝ մեկ միավորի երկարությունը 300 մմ-ից ավելի, հիմնականում կիրառվում է երթևեկելի կամ հետիոտնային մասը առանձնացնելու (սահմանազատելու) համար,

Մշակված՝ մեխանիկական մշակման և գործիքների կիրառմամբ ստացված վերջնական մակերևույթ,

Եզրաքարեր կտրած (ճեղքած)՝ ջարդող գործիքի միջոցով պատրաստված, ուղղանկյունաձև հատմամբ գծամետրային արտադրանք, որի երկարությունը զգալիորեն գերազանցում է լայնությանը և բարձրությանը, արտադրանքի բոլոր մակերեսները (մակերևույթները) կտրած (ջարդած) են, բացառությամբ երեսային մակերեսների, որոնք կարող են ունենալ տարբեր մակատեսք: Ձևից կախված՝ կտրած (ճեղքած) եզրաքարերը բաժանվում են ուղղագիծ և կորագիծ տեսակների:




Եզրաքարեր սղոցած՝ կտրող գործիքի միջոցով պատրաստված, ուղղանկյունաձև հատմամբ գծամետրային արտադրանք, որի երկարությունը զգալիորեն գերազանցում է լայնությանը և բարձրությանը, արտադրանքի բոլոր մակերեսները (մակերևույթները) սղոցած են, բացառությամբ երեսային նիստի, որը կարող է ունենալ տարբեր մակատեսք: Ձևից կախված՝ սղոցած եզրաքարերը բաժանվում են ուղղագիծ և կորագիծ տեսակների:

4 Տեխնիկական պահանջները




4.1 Եզրաքարերը պատրաստում են սույն ստանդարտի պահանջներին համաձայն՝ ըստ սահմանված կարգով հաստատված արտադրող կազմակերպության տեխնոլոգիական հրահանգների և կոնստրուկտորական փաստաթղթերի:

4.2 Եզրաքարերի հիմնական տիպաչափերը տրված են աղյուսակ 1-ում

Աղյուսակ 1

Տիպը	Ձևը	Չափերը, մմ				Կորության տրամագիծ R, մ	Արտադրանքի նշանակումը
		Քարծրություն, H	Լայնություն, b	Երկարությունը L	Մշակված մասի բարձրություն h		
1	2	3	4	5	6	7	8
Եզրաքարեր կտորած (ճեղքած)							
Ուղղանկյուն պրոֆիլով		300	150	700-2000	150	-	Երթևեկելի մասերը խոտածածկ տարածքներից և ճեմուղիներից առանձնացնելու համար
		400	180	700-2000	250		Երթևեկելի մասերը մայթերից, թունելների հետիոտնի համար նախատեսված մայթերից առանձնացնելու համար
Ուղղանկյուն պրոֆիլով		200	100	700-2000	130	-	ճեմուղիները խոտածածկ տարածքներից և մայթերից առանձնացնելու համար
		200	80	700-2000	-	-	ճեմուղիները խոտածածկ տարածքներից և մայթերից առանձնացնելու համար

Տիպը	Ձևը	Չափերը, մմ				Կորության տրամագիծ R, մ	Արտադրանքի նշանակումը
		Բարձրություն, H	Լայնություն, b	Երկարությունը l	Մշակված մասի բարձրություն h		
1	2	3	4	5	6	7	8
		200	150	700-2000	80	-	Երթևեկելի մասերից մայթերի ուղեմուտքերի կարգավորման համար
Կորագծային պրոֆիլով		300	150	700-2000	150	5000	Երթևեկելի մասերը խոտածածկ տարածքներից, և ճեմուղիներից կորացող մասերում առանձնացնելու համար
Եզրաքարեր սղոցած							
Ուղղանկյուն պրոֆիլով		300	150	700--2000	150	-	Ճեմուղիները խոտածածկ տարածքներից և մայթերից առանձնացնելու համար
		400	180	700--2000	250		Երթևեկելի մասերը թունելների հետիոտնի համար նախատեսված մայթերից առանձնացնելու համար

Տիպը	Ձևը	Չափերը, մմ				Կորության տրամագիծ R, մ	Արտադրանքի նշանակումը
		Բարձրություն, H	Լայնություն, b	Երկարությունը L	Մշակված մասի բարձրություն h		
1	2	3	4	5	6	7	8
		600	200	700-2000	450		Երևելեկի մասերը կանուրջների վրա հետիոտնի համար նախատեսված մայթերից առանձնացնելու համար
Ուղղանկյուն պրոֆիլով		200	100	700-2000	130	-	Խոտածածկ տարածքները մայթերից առանձնացնելու համար
Ուղղանկյուն պրոֆիլով		200	80	700-2000	-	-	Խոտածածկ տարածքները մայթերից առանձնացնելու համար
		200	70	700-2000	-	-	
Ուղղանկյուն պրոֆիլով		200	150	700-2000	80	-	Երթևեկեկի մասերից մայթերի ուղեմուտքերի կարգավորման համար

Տիպը	Ձևը	Չափերը, մմ				Կորության տրամագիծ R, մ	Արտադրանքի նշանակումը
		Բարձրություն, H	Լայնություն, b	Երկարությունը l	Մշակված մասի բարձրություն h		
1	2	3	4	5	6	7	8
Կորագծային պրոֆիլով		300	150	700-2000	150	5000	Երթևեկելի մասերը խտածածկ տարածքներից և ճեմուղիներից կորացող մասերում առանձնացնելու համար

4.3 Պատվիրատուի համաձայնությամբ թույլատրվում է պատրաստել եզրաքարեր 2000մմ-ից ավել երկարությամբ, ինչպես նաև պակաս՝ 1-ին աղյուսակում նշվածից, բայց ոչ պակաս 300մմ-ից:

4.4 Պատվիրատուի ցանկությամբ արտադրվում են նաև երեսի մակերևույթի այլ տեսակի մակատեսքով եզրաքարեր, ինչպես նաև եզրահատքով կամ առանց, ընդ որում երզրահատքը և դրա թեքության անկյունը կարող են ունենալ այլ չափեր:

4.5 Եզրաքարերի մակերևույթային անհավասարությունները չպետք է գերազանցեն 3 մմ-ը:

4.6 Եզրաքարերի պատրաստման համար օգտագործվող բազալտի ֆիզիկամեխանիկական հատկությունների ցուցանիշները տրված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Ցուցանիշները	Նորմը
Ջրակլանումը, % (կախված բազալտի հանքավայրից), մինչև	4.0
Սեղմման ամրության սահմանը չոր վիճակում, ՄՊա, ոչ պակաս,	40
Ամրությունը նվազումը ջրահագեցված վիճակում, %, ոչ ավել	35
Սառնակայունությունը, ցիկլերը	F 75-150
Աղակայունությունը, %, ոչ ավել	6.0
Մաշելիությունը, գ/սմ ² , ոչ ավել	1.3
Դիմադրությունը հարվածին, սմ, ոչ պակաս	40
Բնական ռադիոնուկլիդների տեսակարար գումարային արդյունավետությունը, Բկ/կգ, ոչ ավել	740
Ծանոթություն՝ 0.8% ցածր ջրակլանումով բազալտի սառնակայունությունը չեն փորձարկում	

4.7 Եզրաքարերի արտաքին տեսքի վնասվածքների թույլատրելի ցուցանիշները տրված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի արժեքը
Ջարդված անկյուններ, հատ, ոչ ավել	1
Ջարդված անկյունների երկարությունը կողերում, մմ, ոչ ավել	10
Կոտրվածքներ կողերի վրա, հատ ոչ ավել	2
Կողերի կոտրվածքի երկարությունը, մմ, ոչ ավել	10
Փլուկներ, հատ, ոչ ավել	4
Փլուկների ընդհանուր մակերեսը, սմ ² , ոչ ավել	4

4.8 Եզրաքարերի մակատեսքի բնութագրերը և տիպերը տրված են աղյուսակ 4-ում

Աղյուսակ 4

Մակատեսքը	Մակատեսքի բնութագիրը
Ողորկված	Քարի գույնի, նախշերի և կառուցվածքի ամբողջական բացահայտում, առանց նախորդ մշակման հետքերի
Հղկված	հավասարաչափ հղկված մինչև 0.63 մմ ռելիեֆի անհարթություններով, հղկման արդյունքում առաջացած մշակման հետքերով
Ջրաշիթային	Փայլատ, հավասարաչափ խորդուբորդություններով՝ քարի գույնի, նախշերի բացահայտմամբ, մինչև 5 մմ ռելիեֆի բարձրությամբ

4.9 Աղյուսակ 1-ում սահմանված նորմերի թույլատրելի շեղումները, չպետք է գերազանցեն, ըստ

- բարձրության, H
եզրաքարեր կտորած (ճեղքած)՝ ± 15 մմ,
եզրաքարեր սղոցած՝ ± 30 մմ,
- երեսակի լայնության
եզրաքարեր կտորած (ճեղքած)՝ ± 3 մմ,
եզրաքարեր սղոցած՝ ± 5 մմ,

4.10 Մշակված մակերեսների հորիզոնական և ուղղահայաց հարթայնությունից շեղումները և կորագծային քարերի երեսային մակերևույթի շեղումը նախագծային կորությունից չպետք է գերազանցի.

- կտորած (ճեղքած) եզրաքարերի համար՝ 5 մմ 1 մետրի վրա,
- սղոցած եզրաքարերի համար՝ 3 մմ 1 մետրի վրա:

4.11 Մշակված մակերևույթի շեղումը ուղղանկյունությունից չպետք է գերազանցի.

- կտորած (ճեղքած) եզրաքարերի համար՝ 4 մմ,
- սղոցած եզրաքարերի համար՝ 2 մմ:

4.12 Եզրաքարերի կորության տրամագծի առավելագույն շեղումը չպետք է գերազանցի 3 մմ:

4.13 Եզրաքարերի ձևի ցուցանիշների առավելագույն սահմանային շեղումները տրված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Ցուցանիշի անվանումը	Սահմանային շեղումը, մմ	
	Կոտրած եզրաքարեր	Սղոցած եզրաքարեր
Երեսի մակերևույթին զուգահեռ կողի ուղղագծությունը	±6	±3
Երեսի մակերևույթին ուղղահայաց կողի ուղղագծությունը	±6	±3
ճակատային և երեսի մակերևույթի միջև ուղղահայացությունը	±10	±7
Երեսի մակերևույթի ուղղահայացությունը կողաճակատին	±5	±5

4.14 Մակնշումը

Միևնույն խմբաքանակից վերցված եզրաքարերի կողային նիստի վրա չմաքրվող ներկով պետք է դրվի տեխնիկական հսկողության պատասխանատուի կնիքը:

Միևնույն խմբաքանակից վերցված մակնշվող արտադրանքի քանակը պետք է կազմի

- 20%՝ ուղղագիծ եզրաքարերի համար,
- յուրաքանչյուրը՝ կորագիծ եզրաքարերի համար :

5 Ընդունման կանոնները

5.1 Եզրաքարերը ներկայացնում են ընդունման խմբաքանակով: Խմբաքանակ են համարում միևնույն հանքավայրերից արդյունահանված, նույն տեսակի և մշակման ձևի եզրաքարերը: Խմբաքանակի չափը պետք է որոշվի կողմերի համաձայնությամբ:

5.2 Եզրաքարերը պետք ներկայացվեն ընդունման ըստ բարձրության, մեկ շարքով դասավորված:

5.3 Եզրաքարերի ընդունումը պետք է կատարվի գծային մետրով:

5.4 Արտադրող կազմակերպությունից եզրաքարերի իրացումը ուղեկցվում է ազատ ձևաչափի փաստաթղթով (անձնագրով), որտեղ նշվում է.

- կազմակերպությունների, ասոցիացիաների անվանումները, որոնց կազմի մեջ է արտադրող կազմակերպությունը,
- արտադրող կազմակերպության անվանումը և հասցեն,
- անձնագրի համարը և տրման ամսաթիվը,

ՀՍ 405-2019

- խմբաքանակի համարը,
- խմբաքանակում եզրաքարերի քանակը հատերով և գծային մետրերով,
- արտադրանքի տեսակը,
- հանքավայրի անվանումը, որից արդյունահանվել է եզրաքարերի պատրաստման համար նախատեսված բազալտը,
- բազալտի ֆիզիկամեխանիկական բնութագիրը,
- փաստաթղթի լրացման թվականը,
- սույն ստանդարտի նշագիրը:

5.5 Եզրաքարերի որակի գնահատման համար կիրառում են ընդունման և պարբերական հսկողություն: Ընդունման հսկողությունը ընդգրկում է երկրաչափական պարամետրերի և արտաքին տեսքի ցուցանիշների որոշումը:

5.6 Ընդունման-հսկման արդյունքով չընդունված խմբաքանակի եզրաքարերի համար թույլատրվում է կիրառել համատարած հսկում, ընդ որում հսկում են միայն այն ցուցանիշներով, ըստ որի չի ընդունվել խմբաքանակը:

5.7 Պարբերական հսկողությունը, որն իրականացվում է տարին մեկ անգամից ոչ պակաս, ներառում է բազալտի ֆիզիկամեխանիկական հատկությունների ցուցանիշների որոշումը: Յուրաքանչյուր հանքավայրից արդյունահանված բազալտի դեպքում իրականացվում է նույն պարբերական հսկողությունը:

Պարբերական հսկողության ժամանակ՝ ֆիզիկամեխանիկական հատկությունների ցուցանիշների որոշման համար բազալտից սղոցում են հինգական նմուշ:

5.8 Պարբերական փորձարկումների ժամանակ անբավարար արդյունքների դեպքում եզրաքարերի թողարկումը պետք է դադարեցվի և պետք է ապահովվի ստանդարտով սահմանված պահանջները:

5.9 Սպառողը իրավունք ունի կատարել ստացված արտադրանքի ընտրանքային ստուգում՝ սույն ստանդարտի պահանջներին համապատասխան:

6 Փորձարկման մեթոդները

6.1 Նմուշառման կանոնները ըստ ՀՍ ԵՆ 1343:

6.2 Բոլոր ընտրված եզրաքարերը պետք է ենթարկվեն արտաքին զննման և չափման: Եզրաքարերի արտաքին զննումը կատարվում է անզեն աչքով: Չափերի ստուգումը, ինչպես նաև կանոնավոր ձևից շեղումը, ջարդված անկյունների, կողերի վրա կտրվածքների և փլուկների մեծությունները որոշում են 1 մմ ճշտությամբ մետաղական քանոնով ըստ ԳՕՍ 427 և ԳՕՍ 3749 անկյունաքանոններով:

Կորագծային եզրաքարերի երկարությունը որոշում են ըստ ամենամեծ տրամաչափի:

6.3 Եզրաքարերի երեսակողմի անհարթությունը որոշում են ըստ ԳՕՍ 427:

6.4 Բազալտի ֆիզիկամեխանիկական ցուցանիշները, որից պատրաստում են եզրաքարերը որոշում են ըստ ԳՕՍՍ 30629, ՀԱՏ ԵՆ 1343, ինչպես նաև.

6.4.1 Սեղմման ամրության սահմանը չոր վիճակում որոշում են.

Փորձարկման միջոցները.

- հիդրավլիկական մամլիչ՝ ըստ ԳՕՍՍ 28840,
- ստուգիչ անկյունաքանոն 90° ըստ ԳՕՍՍ 3749,
- ձողակարկին՝ ըստ ԳՕՍՍ 166:

6.4.1.1 Փորձարկման նախապատրաստումը

Սեղմման ամրության սահմանի որոշումը կատարում են հինգ նմուշի համար՝ խորանարդաձև՝ 40-50 մմ կողով, կամ գլանաձև՝ 40-50 մմ բարձրությամբ և տրամագծով: Յուրաքանչյուր նմուշ մաքրում են խոզանակով փխրուն մասնիկներից, փոշուց և չորացնում մինչև հաստատուն զանգված ընդունելը (105 ± 5)°C ջերմաստիճանի պայմաններում: Նմուշների նիստերը, որոնց վրա կիրառում են մամլիչ բեռնավորումը մշակում են հղկահաստոցով (սկավառակ), ընդ որում պետք է պահպանվի իրենց զուգահեռությունը: Նմուշների ձևի կանոնավորությունը ստուգում են պողպատե անկյունաքանոնով:

6.4.1.2 Փորձարկման ընթացքը

Փորձարկումից առաջ նմուշները չափում են ձողակարկինով: Հետո նմուշը տեղադրում են մամլիչի հենասալի կենտրոնում և սեղմում մամլիչի վերին սալով, որը պետք է կիպ կերպով կաշի նմուշի ամբողջ վերին նիստին:

Փորձարկման ժամանակ բեռնվածքը նմուշի վրա պետք է աճի անընդհատ և հավասարաչափ 0.3 - 0.5 ՄՊա (3-5 կգուժ/սմ²) արագությամբ: Քայքայող բեռնման մեծությունը պետք է կազմի մամլիչի զարգացրած առավելագույն բեռնվածքի 20-80 %-ը:

6.4.1.3 Արդյունքների մշակումը

Նմուշի ամրությունը ($R_{սղ}$) հաշվարկում են 1 ՄՊա (10 կգուժ/սմ²) ճշտությամբ հետևյալ բանաձևով՝

$$R_{սղ} = P/10F, (R_{սղ} = P/F) \quad (1)$$

որտեղ՝

P-ն՝ մամլիչի քայքայման բեռնվածքն է, Ն (կգուժ),

F-ը՝ նմուշի լայնական կտրվածքի մակերեսը, սմ²,

Սեղմման ամրության սահմանը հաշվարկում են որպես հինգ նմուշների փորձարկման արդյունքների մեծության միջին թվաբանական արժեք:

6.5 Երեսային մեկերևույթի ռելիեֆի անհարթությունները որոշում են ըստ ԳՕՍՍ 32018 և ՀԱՏ ԵՆ 1343:

6.6 Աղակայունության որոշումը ըստ ԳՕՍՍ 32018:

6.7 Պատվիրատուի պահանջով հավելյալ կարող են որոշվել նաև հղկամաշումը և սահքի դիմադրությունը՝ ըստ ԳՕՍՍ 32018:

6.8 Բնական ռադիոնուկլիդների տեսակարար գումարային արդյունավետությունը որոշում են ըստ ԳՕՍ 30108:

7 Փոխադրումը և պահումը

7.1 Եզրաքարերի փոխադրումը իրականացնում են բոլոր տեսակի փոխադրամիջոցներով, սովյալ տեսակի փոխադրամիջոցով բեռների փոխադրման կանոններին համապատասխան:

Եզրաքարերը փոխադրում են դասավորված դարսակների վրա:

7.2 Եզրաքարերի փոխադրման և պահման ընթացքում անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ, որոնք կբացառեն դրանց վնասվելը:

7.3 Եզրաքարերի բեռնումը և բեռնաթափումը նետելով չի թույլատրվում:

8 Արտադրողի երաշխիքները

8.1 Արտադրող կազմակերպությունը պետք է երաշխավորի եզրաքարերի համապատասխանությունը սույն ստանդարտի պահանջներին՝ սպառողի կողմից փոխադրման և պահման պայմանների պահպանման դեպքում:

Հանգուցային բառեր. Եզրաքարեր, տերմիններ և սահմանումներ, տեխնիկական պահանջներ, փորձարկման մեթոդներ, ընդունման կանոններ, մակնշում, պահում և փոխադրում, սպառողի երաշխիք

ՍԴ 91.100.15

Սույն ստանդարտի գինը սահմանվում է 12 էջի համար